

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2 (72)  
2016 թ.

Գլխավոր խմբագիր՝  
Ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀՀ իրավաբանների միություն,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

## Խ մ բ ա գ ր ա կ ա ն խ ո ղ ի ղ ո լ ը

Սամվել Դիլբանդյան -

Ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան -

Ի.գ.թ., գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - Ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - Ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - Ի.գ.դ.

Դավիթ Ավետիսյան - Ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - Ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - Ի.գ.դ.

Վիգեն Քոչարյան - Ի.գ.թ.

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: [a\\_petrosyan@ysu.am](mailto:a_petrosyan@ysu.am)

Դասիչ՝ 77771

Տպագրական 13.5 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

4.05.2016

Հանձնված է տպագրության

20.06.2016

СОЮЗ ЮРИСТОВ РА  
ЮРИДИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ ЕГУ

# ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 2 (72)

2016 г.

Главный редактор:  
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:  
Союз Юристов РА,  
Юридический факультет ЕГУ

## Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Карен Геворгян -

к.ю.н., зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:  
РА, 0025 Ереван,  
ул. Алека Манукяна 1,  
юридический факультет ЕГУ.  
Тел.: 060-71-02-47  
e-mail: a\_petrosyan@ysu.am  
web: [http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

13.5 усл. печ. л.

Тираж: 500

Сдано в набор 04.05.2016

Подписано к печати 20.06.2016

«Պետություն և իրավունք» գիտական հանդեսի սույն համարը նվիրված է վաստակաշատ դատավարագետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ վաստակավար իրավաբան *Ալեքսանդր Բորիսի Սոլովյովի* ծննդյան 80-ամյակին

Данный номер научного журнала “Государство и право” посвящен 80-летию юбилею известного процессуалиста, доктора юридических наук, профессора, Заслуженного юриста РФ *Александра Борисовича Соловьева*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲՈՐԻՍԻ ՍՈՒՈՎՅՈՎԻՆ ԵՊՀ ՈՍԿԵ ՄԵԴԱՆՈՎ  
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆ ..... 8

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՆԸ ..... 9

ԽՈՍՔ ՈՒՍՈՒՑՉԻՆ ..... 10

Ալեքսանդր Վոլկոդ

«ՄԵՎ, ԲԱՅՑ ԱՆՄԱՐ ԿԻՐՔ» (ՊՐՈՖԵՍՈՐ Ա.Բ. ՍՈՒՈՎՅՈՎԻ ԾՆՆԴՅԱՆ  
80-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ) ..... 25

Ալեքսանդր Սոլովյով

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՈՂ ԵՎ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԵՐՈՒՄ  
ԱՊԱՀՈՎԵԼ ՏՈՒԺՈՂԻ ԵՎ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ 38

Գազիկ Ղազինյան, Անի Դանիելյան

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ԴԱՏԱԿԱՆ  
ՎԵՐԱՀՍՎՈՂՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ..... 53

Լեոնիդ Գոլովկո

ՈՒՒՍԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ  
ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՐՈՇ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ..... 63

Սամվել Դիլբանյան, Նարեկ Մինասյան

ՈՐՊԵՍ ՄԵՂԱԴՐՅԱԼ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ ..... 65

Արման Թաթոյան

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ  
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ..... 101

Անատոլի Վլասով

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ  
ՈՐՈՇ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ..... 109

Գազիկ Ղազինյան, Տաթևիկ Սուջյան

ՕՐԵՆՔԻ ՄԻԱՏԵՍԱԿ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ  
ՎՃՈՒԲԵԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ (ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ  
ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ) ..... 120

Մարիա Զյաբլինա

ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԵՎ ԿԱՍԱԾՅԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ  
ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՈՂ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ..... 127

Հրայր Դուկասյան, Անահիտ Հարությունյան

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ  
ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ..... 128

Դավիթ Ավետիսյան

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԳՈՐԾԵՐՈՎ՝ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍՊՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ..... 141

Տատյանա Ռյաբինինա, Դմիտրի Ալիմով

ԱՌԵՐԵՍՄԱՆ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ-ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԻՃԱՀԱՐՈՒՅՑ ՀԱՐՑԵՐԸ ..... 159

Սերգեյ Մարաբյան

ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 160

Վահե Ենգիբարյան, Արթուր Զախոյան

ՔՆՆԻՉԻ ԵՎ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 174

Դավիթ Խաչատուրյան

ԱՐԴԱՐԱՑՄԱՆ ԴԱՏԱՎՃՈՒ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԹՈՂ..... 203

Արմեն Հովհաննիսյան

ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ..... 204

## СОДЕРЖАНИЕ

ПРИКАЗ О НАГРАЖДЕНИИ АЛЕКСАНДРА БОРИСОВИЧА СОЛОВЬЕВА ЗОЛОТОЙ МЕДАЛЬЮ ЕГУ .....	8
НАШ ЮБИЛЯР .....	9
СЛОВО УЧИТЕЛЮ.....	10
Александр Волеводз	
«ОДНА, НО ПЛАМЕННАЯ СТРАСТЬ» (К 80-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ ПРОФЕССОРА АЛЕКСАНДРА БОРИСОВИЧА СОЛОВЬЕВА).....	11
Александр Соловьев	
НЕОБХОДИМО ОБЕСПЕЧИТЬ ПАРИТЕТНОСТЬ ПРАВ ПОТЕРПЕВШЕГО И ОБВИНЯЕМОГО В УПК РФ И РА .....	26
Гагик Казинян, Ани Даниелян	
О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ СУДЕБНОГО КОНТРОЛЯ В ОТНОШЕНИИ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ.....	39
Леонид Головкин	
ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ РОССИЙСКОГО ПРЕДВАРИТЕЛЬНОГО СЛЕДСТВИЯ В КОНТЕКСТЕ НЕКОТОРЫХ НОВЕЙШИХ ИНИЦИАТИВ НА ПОСТСОВЕТСКОМ ПРОСТРАНСТВЕ .....	55
Самвел Дилбандян, Нарек Минасян	
НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ИНСТИТУТА ПРИВЛЕЧЕНИЯ В КАЧЕСТВЕ ОБВИНЯЕМОГО .....	74
Арман Татоян	
ПРОЦЕССУАЛЬНАЯ ФУНКЦИЯ УГОЛОВНОГО ПРЕСЛЕДОВАНИЯ И ЕЕ СООТНОШЕНИЕ С РАССЛЕДОВАНИЕМ ДЕЛА .....	76
Анатолий Власов	
НЕКОТОРЫЕ ТЕОРЕТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РЕАЛИЗАЦИИ ЗАДАЧ СОВРЕМЕННОГО СУДОПРОИЗВОДСТВА .....	102
Гагик Казинян, Татевик Суджян	
ФУНКЦИЯ ОБЕСПЕЧЕНИЯ ЕДИНООБРАЗНОГО ПРИМЕНЕНИЯ ЗАКОНА В РАМКАХ КАССАЦИИ (ПРАВОВАЯ СУЩНОСТЬ И МЕХАНИЗМ ОСУЩЕСТВЛЕНИЯ) .....	110
Мария Зяблина	
ОБЕСПЕЧЕНИЕ ПРАВ И ЗАКОННЫХ ИНТЕРЕСОВ ОБВИНЯЕМОГО И ПОДОЗРЕВАЕМОГО ПО УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОМУ КОДЕКСУ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ.....	121
Граир Гукасян, Анаит Арутюнян	
ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ ПРОЦЕССУАЛЬНЫХ САНКЦИЙ ПО ПРОЕКТУ УПК РА.....	139

Давид Аветисян

ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ МЕР ПРЕСЕЧЕНИЯ ПО ДЕЛАМ ЧАСТНОГО  
ОБВИНЕНИЯ ПО ПРОЕКТУ НОВОГО УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА  
РА..... 145

Татьяна Рябина, Дмитрий Алымов

ПРОБЛЕМНЫЕ ВОПРОСЫ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО РЕГУЛИРОВАНИЯ  
И ТАКТИКО-КРИМИНАЛИСТИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ ПРОИЗВОДСТВА  
ОЧНОЙ СТАВКИ..... 147

Сергей Марабян

НЕКОТОРЫЕ СООБРАЖЕНИЯ ОТНОСИТЕЛЬНО ИЗМЕНЕНИЯ  
ТЕРРИТОРИАЛЬНОЙ ПОДСУДНОСТИ УГОЛОВНЫХ ДЕЛ..... 171

Ваге Енгибарян , Артур Чахоян

УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫЕ И ОРГАНИЗАЦИОННО-ТАКТИЧЕСКИЕ  
ОСОБЕННОСТИ ФОРМ ВЗАИМОДЕЙСТВИЯ СЛЕДОВАТЕЛЯ С СОТРУДНИКОМ  
ОРГАНА ДОЗНАНИЯ..... 185

Давид Хачатурян

ГНОСЕОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ ОПРАВДАТЕЛЬНОГО ПРИГОВОРА КАК МЕТОД  
ОПРЕДЕЛЕНИЯ ПРЕДМЕТА СУДЕБНОГО ПОЗНАНИЯ..... 187

Армен Оганесян

ПРОБЛЕМЫ, ВОЗНИКАЮЩИЕ НА ЭТАПЕ ПРЕДВАРИТЕЛЬНОГО  
ПРОИЗВОДСТВА ПО ПЕРЕСМОТРУ ОКОНЧАТЕЛЬНОГО СУДЕБНОГО АКТА ПО  
ВНОВЬ ОТКРЫВШИМСЯ ОБСТОЯТЕЛЬСТВАМ ..... 213

## ՔՆՆԻՉԻ ԵՎ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Վահե Ենգիբարյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ,  
իրավաբանական գիտությունների դոկտոր,  
ՀՀ դատավորների միության գործադիր տնօրեն (e-mail: vahe777@yahoo.com)*

### Արթուր Չախոյան

*Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ,  
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ,  
իրավաբանական գիտությունների թեկնածու (e-mail: arturchakhoyan@ysu.am)*

Հանցագործությունների քննության ընթացքում քննիչի և հետաքննության մարմինների փոխգործողությունն իրավապահ գործունեության ոլորտի կապերի որոշակի համակարգ է, որը դրսևորվում է փոխազորակցող սուբյեկտների համաձայնեցված գործունեության մեջ:

Քրեական գործեր քննելիս քննիչը և հետաքննության մարմնի աշխատակիցները գտնվում են որոշակի փոխհարաբերությունների մեջ, որոնք իրենց բնույթով կարող են լինել ինչպես դատավարական, այնպես էլ ոչ դատավարական: Այդ փոխհարաբերությունները քրեական դատավարության իրավունքի տեսության մեջ և պրակտիկայում անվանվել են «համագործակցություն», «փոխգործողություն», «փոխհամագործակցություն»<sup>1</sup>:

Իրավաբանական գրականության մեջ միասնական մոտեցում չկա քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի փոխգործողության վերաբերյալ: Կարելի է համաձայնվել Ի. Մ. Գուտկինի այն տեսակետի հետ, որ հետաքննության մարմնի և քննիչի փոխգործողություն ասելով պետք է հասկանալ այդ մարմնի՝ միմյանցից անկախ և օրենքի վրա հիմնված փոխգործողությունը, որի դեպքում նրանք գործում են համաձայնեցված՝ նպատակ հետապնդելով կանխել, խափանել և բացահայտել հանցագործությունները, քրեական պատասխանատվության ենթարկել մեղավորներին, ապահովել պատճառված վնասի հատուցումը<sup>2</sup>:

Հանցագործությունների քննության և բացահայտման ընթացքում իրավապահ մարմինների փոխգործողությունը բնորոշվում է որպես օրենքի, գերատեսչական և միջգերատեսչական նորմատիվ ակտերի վրա հիմնված, տեղով, ժամանակով, խնդիրներով և նպատակներով համաձայնեցված և իրենց հատուկ ուժերի, միջոցների, հնարքների և մեթոդների օգտագործմամբ նախաքննություն և հետաքննություն իրականացնող մարմինների համատեղ գործունեություն, որն ուղղված է հանցագոր-

<sup>1</sup> Տե՛ս Պետրոսյան Կ.Խ., Նախաքննության գիտական կազմակերպման հիմնահարցերը, Երևան, 2001թ., էջ 160, Հովհաննիսյան Բ.Մ., Քննչական և օպերատիվ հետախուզական մարմինների փոխգործողության տակտիկան, Երևան, 1981:

<sup>2</sup> Տե՛ս Гуткин И. М., Органы дознания и предварительного следствия системы МВД и их взаимодействие, М., 1973, էջ 70:

ծությունների, հանցանք կատարած անձանց բացահայտման նպատակով ապացուցողական տեղեկություններ պարունակող աղբյուրներ որոնելուն<sup>1</sup>:

Քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) մանրամասնորեն չի կարգավորել քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի փոխգործողության գործընթացը, ուստի, ինչպես նշվում է գրականության մեջ<sup>2</sup>, պատահական չէ, որ գործող քրեական դատավարության օրենսգրքում բառացիորեն ոչինչ ասված չէ այն մասին, որ հանցագործությունների դեմ պայքարում նախաքննության և հետաքննության մարմինները պարտավոր են փոխգործակցել միմյանց հետ:

Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի դատավարական փոխգործողությունները կարգավորվում են Օրենսգրքով: Այս առումով որոշակի առանձնահատկություններ է նախատեսել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ):

Օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հետաքննության մարմինը Օրենսգրքով հետաքննության իրավասություն ունեցող պետական մարմնի համապատասխան ստորաբաժանման պետն է և աշխատակիցները, իսկ 56-րդ հոդվածի համաձայն՝ հետաքննության մարմիններն են՝ ոստիկանությունը, զորամասերի, զորամիավորումների հրամանատարները և զինվորական հիմնարկների պետերը, ռազմական ոստիկանությունը, Հայաստանի փրկարար ծառայության մարմինները, Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունը, հարկային մարմինները, մաքսային մարմինները, ազգային անվտանգության մարմինները, քրեակատարողական հիմնարկները, օդանավի հրամանատարը:

Եթե Օրենսգիրքը չի սահմանում հետաքննության հասկացությունը, այլ միայն բացահայտում է, որ հետաքննությունը նախնական քննության փուլ է, որը կարող է լինել քննության սկզբնական փուլ՝ քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում, ապա Նախագծի 6-րդ հոդվածը նախ տալիս է հետաքննության սահմանումը, համաձայն որի՝ հետաքննությունը հետաքննության մարմնի կողմից նախաքննության ընթացքում իրականացվող և դրան օժանդակող գործունեություն է, որը ներառում է գաղտնի քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարումը, այնուհետև սահմանում է հետաքննության մարմնի հասկացությունը, համաձայն որի՝ հետաքննության մարմինը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պետական մարմնի համակարգում գործող և օպերատիվ-հետախուզական գործառնություններ իրականացնող ստորաբաժանման ղեկավարն է (հետաքննության մարմնի պետը) և աշխատակիցները (հետաքննիչները), ովքեր նախաքննության շրջանակներում իրավասու են կատարելու գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

Նախաքննության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև հանցագործությունների արագ բացահայտման տեսանկյունից կարևոր է, թե քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի փոխգործողության շրջանակներում ով պետք է հանդես գա նախաձեռնությամբ: Համաձայն Օրենսգրքի 55-րդ հոդվածի՝ քննիչը լիազոր-

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս *Енгибарян В. Г. Теоретические основы взаимодействия органов расследования*// «Ղատակյան իշխանություն», 2010թ. մայիս, 5 (130) էջ 87:

<sup>2</sup> Տե՛ս *Պետրոսյան Կ.Խ.* Նախաքննության գիտական կազմակերպման հիմնահարցերը, Երևան, 2001թ., էջ 160 (Հեղինակը նշված միտքը պայմանավորում է քրեական դատավարության օրենսգրքում քննիչի և հետաքննության մարմնի համագործակցությունը որպես ինքնուրույն սկզբունք չնախատեսելով):

ված է իր իրավասության սահմաններում հետաքննության մարմնից տեղեկություններ ստանալ օպերատիվ-հետախուզական գործողությունների իրականացման և հանցագործությունների բացահայտման, անհայտ կորած անձանց և կորած գույքի հայտնաբերման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին, հետաքննության մարմնին՝ նրա համար պարտադիր գրավոր հանձնարարություններ տալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման մասին, հետաքննության մարմնին հանձնարարել իրագործելու ձերբակալման, բերման ենթարկելու, կալանավորման, այլ դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ որոշումները, ինչպես նաև հետաքննության մարմնից անհապաղ աջակցություն ստանալ քննչական և այլ դատավարական գործողություններ իրականացնելիս:

Հիշյալ հոդվածի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ բոլոր դեպքերում նախաձեռնություն պետք է հանդես բերի քննիչը, քանի որ վերջինս է լիազորված **հանձնարարություններ** տալու հետաքննության մարմիններին, թեև Օրենսագրքը չի բացահայտում «հանձնարարություն» եզրույթը: Ի տարբերություն Օրենսագրքի՝ Նախագծի 6-րդ հոդվածի համաձայն՝ **հանձնարարությունը** դատախազի կողմից քննիչին, քննչական մարմնի ղեկավարին, քննչական մարմնի ղեկավարի կողմից քննիչին կամ քննիչի կողմից հետաքննության մարմնին՝ իրենց իրավասության սահմաններում տրվող գրավոր հրահանգ է՝ պարզելու որոշակի հանգամանքներ, կատարելու որոշակի գործողություններ, կայացնելու որոշումներ կամ ձեռնպահ մնալու որևէ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց:

Սակայն, բոլոր դեպքերում, մեր կարծիքով, կարևոր չէ, թե ով է փոխգործողության նախաձեռնողը. այն կարող է լինել ինչպես քննիչը, այնպես էլ հետաքննության մարմնի աշխատակիցը, էական է այն, որ նախաձեռնողը պետք է կարողանա հոգեբանական կապ հաստատել փոխգործողության մյուս մասնակցի հետ, քանի որ հանցագործություններ քննելիս քննիչի և հետաքննության մարմինների միջև հանձնարարություններից բացի առաջանում են նաև փոխգործողության այլ՝ ոչ դատավարական ձևեր, և փոխգործողության բոլոր տեսակների համար բնութագրական և անհրաժեշտ է քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի միջև անձնական շփման հաստատումը: Հետևաբար էական նշանակություն են ձեռք բերում ինչպես քննիչի, այնպես էլ հետաքննության մարմնի աշխատակցի անձնական հաղորդակցական հատկությունները: Հաղորդակցման անձնական հատկություններին են վերաբերում քաղաքավարությունը, բարյացակամությունը, հարգալից վերաբերմունքը միմյանց նկատմամբ, ուրիշին լսելու ունակությունը, հետաքրքրությունը մարդկանց նկատմամբ և այլն, այլ կերպ ասած՝ կարևոր է նրանց միջև հոգեբանական կապի հաստատումը: Ինչպես նշում է Ա. Վ. Դուլովը՝ հոգեբանական կապի ստեղծումն այնպիսի պայմանների ձևավորմանը նպաստակաուղղված, պլանավորված գործունեություն է, որոնք կոչված են ապահովելու անհրաժեշտ ուղղությամբ շփման զարգացումը և դրա նպատակների իրագործումը<sup>1</sup>: Իսկ փոխգործողություններում հոգեբանական կապի հաստատման համար կարևոր հիմք է շփման և ընդհանուր նպատակների նկատմամբ նրա մասնակիցների շահագրգռվածության առկայությունը:

Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի հարաբերությունների կարգավորման առումով Նախագծի առավելություններից է նաև այն, որ վերջինս կարգավորում է վարույթի հանրային մասնակիցների (դատախազի, քննիչի, քննչական

<sup>1</sup> St`u **Дулов А. В.**, Судебная психология. Изд. 2-е испр. и доп., Минск, “Вышэйшая школа”, 1975, էջ 107:

մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի պետի, հետաքննիչի) փոխհարաբերությունները և այդ հարցի կարգավորմանը նվիրել է առանձին հոդված: Ասպես, Նախագծով քննիչն իրավասու է հանձնարարություն տալ հետաքննության մարմնին՝ նախաքննության համակողմանիությունը և բնականոն ընթացքն ապահովելու կապակցությամբ: Բացի դրանից, իր իրավասության սահմաններում քննիչի տված հանձնարարությունը պարտադիր է հետաքննության մարմնի համար, սակայն հետաքննության մարմնի պետն իրավասու է դրա վերաբերյալ գրավոր առարկություն ներկայացնել հսկող դատախազին կամ քննչական մարմնի ղեկավարին՝ չկատեցնելով հանձնարարության կատարումը:

Նախագիծն ընդլայնել է նաև քննիչի լիազորությունները հետաքննության մարմինների հետ հարաբերություններում և վերջինիս համար սահմանել այնպիսի լիազորություններ, որոնցով գործող օրենսդրությամբ լիազորված է միայն դատախազը: Օրինակ ի տարբերություն Օրենսգրքի, Նախագծով քննիչը հետաքննության մարմնին հանձնարարում է կատարել ձեռքարկման, կալանավորման վերաբերյալ որոշումները, ինչպես նաև հետաքննության մարմնից աջակցություն է ստանում ապացուցողական և այլ վարության գործողություններ կատարելիս, հետաքննության մարմնին տալիս է գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարություններ, հետաքննության մարմնից **պահանջում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքները:**

Հարկ է նկատել, որ քննիչը ոչ բոլոր դատավարական գործողությունների իրականացումը կարող է հանձնարարել հետաքննության մարմնին: Թեև նշված դրույթն օրենսդրորեն ամրագրված չէ, սակայն ձևավորված քննչական պրակտիկայում հետաքննության մարմինը քննիչին օգնում է նախապատրաստել և իրականացնել միայն բարդ և աշխատատար քննչական գործողությունները կամ իրականացնում է այս կամ այն պարտականությունները քննչական գործողությունների ընթացքում<sup>1</sup>: Հանձնարարությունն արդյունավետ ու նպատակահարմար փոխգործողության ձև է, որը սահմանված է օրենքով<sup>2</sup>: Հանձնարարություն տալով՝ քննիչը հետաքննության մարմնի առջև խնդիր է դնում, սակայն դրա լուծման ուղիները և միջոցները որոշում է հետաքննության մարմինը:

Անկախ այն բանից, թե փոխգործողությունը կրում է ժամանակավոր, թե մշտական բնույթ, իրականացվում է մեկ քննչական գործողության, թե ապացուցման ողջ գործընթացի ընթացքում, միևնույնն է այն է առանձին որոշակի մեթոդների ու միջոցների կիրառման եղանակով իրականացվող գործունեություն է:

Գտնում ենք, որ հետաքննության մարմնին կարող են հանձնարարվել միայն որոշակի գործողությունների կատարում և որոշակի պայմանների առկայության դեպ-

<sup>1</sup> Տե՛ս **Косимов О. А.**, Проблемы взаимодействия следователя с органами дознания на стадии возбуждения уголовного дела по материалам оперативно-розыскной деятельности // Российский следователь, 2011, № 12, էջ 34:

<sup>2</sup> Տե՛ս **Мельников А. С.**, Поручения как одна из форм взаимодействия следователя с органами дознания / А.С. Мельников, С.С. Чернова // Совершенствование деятельности правоохранительных органов по борьбе с преступностью в современных условиях: материалы Международной научно-практической конференции (03–04 ноября 2011 г.). Вып. 8. — Тюмень: ООО «Вектор Бук», Тюм. обл. Дума, ГАОУ ВПО ТО «ТГАМЭУП», 2011, էջեր 208–210; **Кругликов А.** Поручения следователя органам дознания о проведении оперативно-розыскных мероприятий в стадии возбуждения уголовного дела / А. Кругликов // Уголовное право. — 2011. — № 4, էջեր 88–92:

քում միայն: Դրանք կարող են լինել այն քննչական գործողությունները, որոնք իրենց բնույթով առավել մոտ են և հարիր հետաքննության մարմնի գործառույթներին, իսկ պայմանները, այն մասնավոր քննչական իրավիճակներն են, որոնք դժվարացնում կամ անհնար են դարձնում դրանց կատարումը քննիչի կողմից<sup>1</sup>:

Անշուշտ, քննիչի և հետաքննության մարմինների փոխհարաբերություններում իրավական առաջնայնությունը պատկանում է քննիչին, ով իրավունք ունի հանձնարարություններ տալու, իսկ հետաքննության մարմինները պետք է կատարեն դրանք, սակայն, ինչպես իրավացիորեն նշում է և Ա. Կոզուսևը, «օպերատիվ հետախուզական մարմինների և քննիչի համագործակցությունը չի նշանակում ծառայողական ենթակայություն, դատավարական և օպերատիվ-հետախուզական գործունեության միաձուլում: Դրանցից յուրաքանչյուրը շարունակում է մնալ ինքնուրույն մարմին՝ գործելով իր իրավասությանը խիստ համապատասխան»<sup>2</sup>:

Հարկ ենք համարում ընդգծել, որ ներկայումս մասնագիտական գրականության մեջ քրեադատավարական փոխգործողության ձևի վերաբերյալ միասնական սահմանում գոյություն չունի:

Իրավաբանական գրականության մեջ Ա.Մ. Բալաշովը, Ի.Մ. Գուտկինը, Ի.Ֆ. Գերասիմովը, Ն.Ն. Գապանովիչը, Ա.Յ. Դուբինսկին, Ի.Ի. Մարտինովիչը, Վ.Ա. Ռոգոժինը և այլ իրավաբան գիտնականներ քննիչի և հետաքննության մարմնի փոխգործողությունն ավանդականորեն դասակարգում են ըստ հետևյալ հիմքերի.

- ա) քրեական դատավարության օրենքով կարգավորվող,
- բ) գերատեսչական և միջգերատեսչական հրամաններով և կարգադրություններով նախատեսված,
- գ) քննչական պրակտիկայում ձևավորված, բայց իրենց նորմատիվ ամրագրումը չստացած<sup>3</sup>:

Փոխգործողության գիտականորեն առավել հիմնավորված դասակարգման ձև է առաջարկում Ի. Ֆ. Գերասիմովը, ով փոխգործունեությունը բաժանում է 2 խմբի՝ դատավարականի և կազմակերպատակտիկականի<sup>4</sup>: Առաջինին ընդգրկում է քրեադատավարական օրենքով կարգավորվող, իսկ եկրորդը՝ փոխադարձ կապի ձևը, որն անմիջականորեն չի կարգավորվում օրենքով, սակայն սերտ կապված է քրեադատավարական ձևերի և դրա հիման վրա առաջացող ձևերի հետ: Քրեադատավարական փոխգործողությանն են վերաբերում քննիչի հետաքննության մարմնի կողմից պարտադիր կատարման ենթակա հետախուզական և քննչական գործողություններ կատարելու հանձնարարություններ և ցուցումներ տալու իրավունքը,

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս *Енгибарян В. Г.* Расследование массовых беспорядков: теоретические, организационные и методико-криминалистические основы (по материалам Республики Армения). Дисс. ... докт. юрид. наук. - М., 2015.- էջեր 289-292.

<sup>2</sup> Տե՛ս *Козусев А.*, Надзор за исполнением законов в оперативно-розыскной деятельности / А. Козусев // Законность. — 1997. — № 2, էջ 20:

<sup>3</sup> Տե՛ս *Балашов А. Н.*, Взаимодействие следователя и органа дознания при расследовании преступлений. — М., 1973; *Гуткин И.М.* Указ. соч.; *Герасимов И. Ф.* Взаимодействие органов предварительного следствия и дознания при расследовании особо опасных преступлений. — Свердловск, 1965; *Дубинский А. Я.* Взаимодействие следователя с органом дознания. — Киев, 1970; *Гапанович Н. Н., Мартинович И. И.* Указ. соч.; *Рогожин В. А.* Взаимодействие следователя с органами дознания при производстве расследования по делам о преступлениях, совершенных несовершеннолетними. — Киев, 1985.

<sup>4</sup> *Տե՛ս Գերասիմով Ի. Փ.* Некоторые проблемы раскрытия преступлений. — Свердловск, 1976, էջեր 132-151.

ինչպես նաև տարբեր քննչական գործողություններ կատարելուն աջակցելու քննիչի պահանջը:

Ինչ վերաբերվում է կազմակերպատակտիկական ձևին, ապա Ի. Ֆ. Գերասիմովը համակարծիք է Ն. Ա. Յակուբովիչի հետ, և դրանցից ամենատարածվածները համարում են.

- համատեղ դեպքի տեղ մեկնումը,
- քննության համատեղ պլանավորումը,
- հատուկ խմբերի կողմից բարդ և բազմադրվագ գործերի քննության կազմակերպումը, որոնց կազմի մեջ մտնում են քննիչները և հետաքննության մարմինները,
- քննիչների և հետաքննության մարմինների՝ այլ վայրեր համատեղ մեկնումը, քննչական և օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելը քննվող գործի շրջանակներում<sup>1</sup>:

Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի միջև առաջացող և պրակտիկայում շատ հանդիպող ու ամենատարածված փոխգործողության ձևը քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի համատեղ մեկնումն է դեպքի տեղ:

Հայտնի է, որ զննության համար դեպքի տեղ մեկնումը և «թարմ հետքերով» աշխատանքները պրակտիկայում իրականացնում են օպերատիվ խմբերը: Օպերատիվ խմբի մեջ է մտնում քննիչը (<< ՔԿ, ԱԱԾ կամ ՀՔԾ), քրեական հետախուզության աշխատակիցը, քրեագետը, դատական բժիշկը և այլք: Դեպքի տեղի զննության կատարումը ղեկավարում է քննիչը, իսկ տեղազննության մյուս մասնակիցները գործում են քննիչի ղեկավարությամբ և նրա ցուցումներով:

Օպերատիվ խմբի աշխատանքը միայն դեպքի տեղի զննությամբ չի ավարտվում, այլ կապված է մի շարք այնպիսի անհետաձգելի քննչական և հետախուզական գործողությունների հետ, ինչպիսիք են՝ վկաներ հայտնաբերելը, հանցագործի հետապնդումը, տուժողի հարցաքննությունը, քրեական գրանցումը, քաղաքացիներին հարցման ենթարկելը, որոնք կատարվում են հանցագործին և վկաներ հայտնաբերելու, հափշտակված զույքը հայտնաբերելու և այլ նպատակներով: Եթե այդ աշխատանքները դիտարկենք սոցիալական հոգեբանության տեսակետից, ապա կարելի է նկատել, որ այն խմբային գործունեություն է, իսկ օպերատիվ խմբին և խմբային գործունեությանը հատուկ են որոշակի հոգեբանական օրինաչափություններ:

Նախ հարկ է նշել, որ դեպքի տեղի զննություն իրականացնող օպերատիվ խմբում կատարվում է դերերի բաշխում:

Քանի որ խմբային գործունեության ընթացքում ղեկավարի առաջադրումը իրականացվում է օբյեկտիվ գործոնների (կոնկրետ իրադրությունում՝ խմբի շահերի, նպատակների, պահանջմունքների, խնդիրների) և սուբյեկտի (անհատի՝ որպես խմբային գործունեության նախաձեռնողի և կազմակերպողի, անհատական խմբային առանձնահատկությունների) միաժամանակյա գործողություններով, ապա գործնականում դեպքի տեղ մեկնող օպերատիվ խմբի գործունյա և անհատական անհրաժեշտ հատկություններով օժտված ցանկացած մասնակից կարող է հանպատրաստից առաջադրվել ոչ պաշտոնական, իրական առաջնորդի դերում: Այդպիսի ղեկավարը կարող է դառնալ քրեական հետախուզության այն աշխատակիցը կամ քրեագետը, ով մասնագիտական հարաբերություններում առավել փորձառու է և առավել պատրաստված, հետևաբար օպերատիվ խմբի՝ դեպքի տեղ մեկնելու նպա-

<sup>1</sup> *Ратинев А. Р., Якубович Н. А.* Взаимодействие следователей прокуратуры и органов милиции при расследовании и предупреждении преступлений. – М., 1964.- էջ 48

տակների իրագործման համար առավել օգտակար:

Օպերատիվ խմբի անդամներից որևէ մեկի առաջադրումը ղեկավարի դերում հնարավոր է նրա՝ մյուսներից առավել այնպիսի անհատական հատկանիշների շնորհիվ, ինչպիսիք են եռանդը, բանիմացությունը, կամքի ուժը, հեղինակությունը և հարգանքը կոլեկտիվի անդամների մոտ, վստահությունը սեփական ուժերի նկատմամբ, խելամտությունը, կազմակերպվածությունը, լրջությունը և ինքնուրույնությունը: Թվարկված հատկանիշների շնորհիվ ղեկավարը հաճախ դառնում է տեղազննության և միաժամանակ դրա արդյունքների հիման վրա իրականացվող այլ աշխատանքների փաստացի կազմակերպիչը:

Կրիմինալիստների համար ավանդական է համոզումն այն մասին, որ դեպքի տեղի գննության ղեկավարը քննիչն է: Եվ դա արդարացի է: Բայց չի կարելի անտեսել սոցիալական հոգեբանության այն օրինաչափությունները, որոնք պրակտիկայում որոշակի փոփոխությունների են ենթարկվում, թեև դրանք ոչ միշտ են գիտակցվում օպերատիվ խմբի սուբյեկտների կողմից: Այդ պատճառով ամբողջությամբ օրինաչափ կլինի, եթե օպերատիվ խմբում հանպատրաստից կատարվի ղեկավարների փոփոխություն (փաստացի գործունյա ղեկավար է դառնում ոչ թե պաշտոնական ղեկավարը՝ քննիչը, այլ օպերատիվ խմբի մեկ այլ մասնակից), կամ առաջ գան երկու ղեկավարներ՝ պաշտոնական և ոչ պաշտոնական՝ գործարար: Հետևաբար պատք է արձանագրել, որ օպերատիվ խմբում երկու ղեկավարների առկայությունը միշտ և առանց բացառության «հանգեցնում է անհամաձայնության, ուժերի տարրալուծման»<sup>1</sup>:

Ղեպքի տեղում օպերատիվ խմբի աշխատանքների արդյունավետությունը կախված է ոչ միայն ղեկավարների թվից, այլ նաև նրանց միջև ձևավորված հոգեբանական հարաբերություններից: Վ.Բիկովի կարծիքով՝ կախված ղեկավարների քանակից (պաշտոնական և ոչ պաշտոնական) և նրանց միջև հոգեբանական հարաբերություններից, օպերատիվ խմբում կարող են ձևավորվել հետևյալ իրադրությունները.

✓ Պաշտոնական և ոչ պաշտոնական ղեկավարները համատեղվում են մեկ անձով՝ քննիչով:

✓ Պաշտոնական և ոչ պաշտոնական ղեկավար են դառնում տարբեր անձինք (համապատասխանաբար քննիչը և հետաքննության մարմնի աշխատակիցը), սակայն պաշտոնական ղեկավարն անհատական հատկությունների ուժով կամավոր և անվերապահորեն ղեպքի տեղում օպերատիվ խմբի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման իր գործառույթները զիջում է ոչ պաշտոնական ղեկավարին:

✓ Պաշտոնական և ոչ պաշտոնական ղեկավարներ են դառնում տարբեր անձինք, սակայն նրանց միջև հաստատվում են փոխըմբռնման և փոխօգնության հարաբերություններ. նրանք օգնում են միմյանց և ջանում են խորհրդակցելով լուծել բոլոր հարցերը:

✓ Պաշտոնական և ոչ պաշտոնական ղեկավարները տարբեր անձինք են, և ղեպքի տեղում օպերատիվ խմբի աշխատանքների ողջ ընթացքում նրանց միջև կարող է առաջանալ թաքնված կամ բացահայտ սուր պայքար՝ հեղինակության և ղեկավարելու համար ոչ պաշտոնական ղեկավարը երբեմն քննադատական դիրքորո-

<sup>1</sup> Ст'ю Порубов М. И., Научная организация труда следователя, Минск, 1970, էջ 73:

շում է որդեգրում պաշտոնական ղեկավարի՝ քննիչի նկատմամբ<sup>1</sup>:

Ինչպես ցույց է տալիս քննչական պրակտիկան, քննիչը այն դեպքում է դառնում նաև ոչ պաշտոնական ղեկավար, երբ նա ունի մասնագիտական բարձր պատրաստվածություն և քննչական աշխատանքի մեծ փորձ, ինչպես նաև, երբ տարիքով մեծ է և օժտված է անհատական դրական հատկանիշներով<sup>2</sup>:

Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի փոխգործողությունների հաջորդ ձևը համատեղ գործունեության պլանավորումն է, որին հատուկ են որոշակի հոգեբանական առանձնահատկություններ: Ամենից առաջ հարկ է նշել, որ դրա համար կարևոր նշանակություն ունի գործնական, ստեղծագործական մթնոլորտի ստեղծումը:

Հանցագործություններ քննելիս և բացահայտելիս քննիչի ու հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունների համատեղ պլանավորումը պետք է իրականացվի մասնակիցների ստեղծագործական ակտիվության և ինքնուրույնության համատեքստում: Հայտնի է, որ վարկածի առաջադրումը շատ ավելի կարևոր, բայց և դժվար խնդիր է: Դրա բարդությունը կրկնապատվում է, քանի որ համատեղ պլանավորման մասնակիցներից մեկը օբյեկտիվ պատճառներով (համապատասխան մասնագիտական փորձի բացակայության) կամ իր անհատական հատկություններով ենթակայի կարգավիճակում գործնականում չի մասնակցում վարկածների առաջադրմանը, այլ միայն համաձայնվում է ղեկավարների առաջարկների հետ: Միաժամանակ կարևոր է պլանավորման ընթացքում ապահովել յուրաքանչյուրի մասնակցությունը՝ օգտագործելով բոլորի ստեղծագործական ընդունակությունները, որպեսզի ոչ մի միտք, ոչ մի վարկած չհերքվի մեխանիկորեն, առանց անհրաժեշտ քննարկման:

«Որոշման կոլեկտիվ ընդունման սոցիալ-հոգեբանական հնարքներից մեկը խմբային երկխոսությունն է: Այն օգտագործվում է քննարկվող հարցի անորոշության կամ վիճելիության պարագայում՝ լուծում գտնելու համար»<sup>3</sup>:

Քննությունը համատեղ պլանավորելիս երկխոսությունը կարծիքների լայնածավալ փոխանակում է, առաջադրվող վարկածների խորը և բազմակողմանի քննարկում ու զարգացում: Խմբային երկխոսության առանձնահատկությունը՝ կոլեկտիվ որոշման մեթոդ է. այս դեպքում փոխգործողության յուրաքանչյուր մասնակից հանդես է գալիս որոշման սուբյեկտի դերում, անկախ նրանից՝ նա արտահայտվում է, վիճում կամ լսում ուրիշին: Երկխոսությունը նպաստում է ստեղծագործական իրադրության ստեղծմանը, ծնում է ասոցիացիաներ, բարձրացնում է քննության համատեղ պլանավորման մասնակիցների ակտիվությունը, ստեղծում է այնպիսի պայմաններ, որոնք յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն են տալիս արտահայտվելու քննարկվող հարցի կապակցությամբ:

«Երկխոսության ընթացքում մտավոր մրցակցության զգացմունքային գրգռիչ մթնոլորտը կենտրոնացնում է մասնակիցների թաքնված մտավոր ընդունակությունները՝ հնարավորություն ընձեռելով ամբողջությամբ ցույց տալ՝ ով ինչի է ընդունակ որպես ստեղծագործական փաստի սուբյեկտ, այլ ոչ թե պաշտոնական անձ: Թեզիս-

<sup>1</sup> St' u **Быков В. М.**, Психологические аспекты взаимодействия следователя и органа дознания, Омск, 1976, էջ 31:

<sup>2</sup> St' u **Кузнецов М. С.**, Взаимодействие следователя военной прокуратуры с органами дознания при расследовании преступлений. Дисс. ... канд. юрид. наук. - М., 2002, էջ 133:

<sup>3</sup> St' u **Кузьмин Е. С., Волков И. П., Емельянов Ю. Н.**, Руководитель и коллектив, Социально-психологический очерк, Л., 1974, էջ 119:

ներ առաջադրելու և կարծիքը պնդելու իրավունք ստանալով՝ անձն ինքնարտահայտման հնարավորություն է ստանում: Նրանց մտքերի քննադատությունը նպաստում է ինքնագնահատականի կոնկրետացմանը և ինքնագիտակցության բարձրացմանը»<sup>1</sup>:

Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի միջև երկխոսության շնորհիվ կազմված քննության պլանը ավելի արդյունավետ է, քանի որ դա կապված է յուրաքանչյուր մասնակցի այն միջոցառումների նկատմամբ ունեցած վերաբերմունքի հետ, որոնք դրանում ընդգրկված են. դրանք յուրաքանչյուր մասնակցի կողմից ընկալվում են որպես իրենց սեփական որոշումները:

Սա է նաև քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի կողմից հանցագործությունների քննության համատեղ պլանավորման դրական կողմերից մեկը: Ենթադրվում է, որ խմբային երկխոսության մեթոդը հաջողությամբ կարող է օգտագործվել չբացահայտված հանցագործությունների վերաբերյալ կասեցված գործերով քննությունը պլանավորելիս, որոնցով, ինչպես հայտնի է, համատեղ պլանավորման պահին բոլոր տիպիկ և առավել հավանական վարկածները արդեն առաջադրված և օրինաչափ են համարվում, և որոնցով հատուկ կարևոր է հանցագործության հանգամանքներին հետևել «ուրիշի աչքերով», հաղթահարել հոգեբանական ինտերցիան:

Քննիչի և հետաքննության մարմնի համատեղ գործունեության անհրաժեշտ ձևերից է տեղեկությունների համակարգված փոխանակումը: Մեր կարծիքով քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի միջև տեղեկությունների փոխանակումը պետք է լինի փոխադարձ, պիտանի, հնարավորինս կոնկրետ և պետք է ներկայացվի պահանջվող ձևով, քանի որ քննության ընթացքում կարող են առաջանալ նաև այնպիսի իրավիճակներ, երբ քննիչին կամ հետաքննության մարմնի աշխատակցին անհրաժեշտ է լինում դրանք ունենալ գրավոր: Այսպիսի իրավիճակներ կառաջանան այն դեպքերում, երբ տեղեկությունները պետք է կցվեն քրեական գործի նյութերին, կամ դրանք պետք է օգտագործվեն այլ կերպ:

Փոխգործողության յուրաքանչյուր ձևի կիրառումը պետք է ավարտվի քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի համատեղ գործունեության արդյունքների ամփոփմամբ:

«Համատեղ գործունեության արդյունքների ընկալումը, այսինքն՝ այն բանի գիտակցումը, որ ստեղծված կոմունիկատիվ կապը բերում է շոշափելի, օբյեկտիվ արդյունքների»<sup>2</sup>, ամրապնդում է փոխգործակցող քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի հարաբերությունները և լուրջ հիմքեր է ստեղծում ապագայում փոխգործողության համար:

Հարկ է նշել, որ փոխգործողության կազմակերպման որոշ ձևեր մշակվել են նաև քննչական արակտիկայի կողմից:

Դրանց մի մասը ժամանակի ընթացքում իր իրավական կարգավորումն է ստացել գերատեսչական նորմատիվ ակտերում: Մեր կարծիքով ոչ դատավարական փոխգործողության ձևերն առավել լիարժեք արտացոլված են պրոֆեսոր Ա.Ա. Չուվիլևայի աշխատությունում.

- քննչական և օպերատիվ խմբի համատեղ հերթապահություն, որը նախատեսված է հերթապահ մաս հանցագործությունների մասին հաղորդումներ ստանա-

<sup>1</sup> St' u Кузьмин Е. С., Волков И. П., Емельянов Ю. Н., Руководитель и коллектив, Социально-психологический очерк, Л., 1974, էջ 121:

<sup>2</sup> Дулов А. В. Судебная психология. Изд. 2-е испр. и доп., Минск, "Вышэйшая школа", 1975, էջ 93:

լու արտակարգ դեպքերի համար,

- քննիչի և ոստիկանության աշխատակիցների քրեական գործերով աշխատանքն օպերատիվ-քննչական խմբի կազմում,

- քրեական գործ հարուցելու համար տվյալների միասնական քննարկում՝ դրանք բավարար լինելու առումով, որոնք ձեռք են բերվել օպերատիվ-հետախուզական եղանակով,

- քննչական և օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու համար համաձայնեցված պլաններ կազմելը<sup>1</sup>:

Փոխգործողության կազմակերպական ձևի առանձնահատկությունը, ի տարբերություն դատավարականի, նրա անընդհատ կատարելագործումն է: Ի հայտ են գալիս նոր տեսակներ՝ պահանջելով իրենց փորձարկումները և դրանց հետագա ամրագրումը ենթաօրենսդրական ակտերում: Այնուամենայնիվ, դրանցից յուրաքանչ-յուրը պետք է հիմնված լինի երկու չափանիշների վրա.

ա) ցանկացած տեսակի փոխգործողությունը պետք է հիմնված լինի ֆունկցիոնալ պարտականությունների հետևողականության և ճիշտ բաժանման վրա:

բ) փոխգործողության ձևը և միջոցները չեն կարող հակասել օրենքներին:

Քննիչի և հետաքննության մարմինների փոխգործողության զարգացմանը համընթաց, ինչպես կարծում է Ս. Վ. Բաժանովը, հետաքննության մարմինների գերիշխող գործառույթը դառնում է օպերատիվ-հետախուզական գործունեությունը<sup>2</sup>: Քննիչների և օպերատիվ աշխատակիցների (ոստիկանության) փոխգործողությունը կարգավորող օրենսդրության բացակայության պատճառով, այն կատարելագործվում է հենց պրակտիկայի ուժով:

Այսպիսով, քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի փոխգործողությունը քրեադատավարական օրենքի վրա հիմնված փոխհարաբերությունների բարդ և բազմաշերտ համակարգ է, որը նպատակաուղղված է քրեական գործի քննության արդյունավետության բարձրացմանը, և որի իրավական, սոցիալական, բարոյահոգեբանական ասպեկտները մշտական ուսումնասիրման ու կատարելագործման կարիք ունեն:

<sup>1</sup> *Чувилев А. А.* Взаимодействие следователя органа внутренних дел с милицией. - М.: МВШМ МВД СССР, 1981, с. 15.

<sup>2</sup> *Бажанов С. В.* Становление и развитие групповых методов расследования. - М.: Инфра-М, 1997, с. 11-13.

## CRIMINAL PROCEDURE AND ORGANIZATIONAL-TACTICAL SPECIFICS OF INTERACTION FORMS BETWEEN INVESTIGATOR AND EMPLOYEE OF INQUIRY BODY

### Vahe Yengibaryan

*Docent of the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics, Doctor of Laws, Executive Director of the Association of Judges of the RA (e-mail: vahe777@yahoo.com)*

### Artur Chakhoyan

*Senior prosecutor of the Yerevan prosecutor's office, Docent of the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics, Candidate of Laws (e-mail: arturchakhoyan@ysu.am)*

---

The article is devoted to criminal procedure law and one of the most important problems of forensic science that are the organizational foundations of criminal case, in particular the organization of interaction of the investigator and the employee of inquiry body.

The point is that during the investigation the interaction of the investigator and the inquiry bodies represents a certain connection system of law enforcement activity, which finds its reflection in the concerted activity of interoperable subjects.

When examining criminal cases, the investigator and the employee of inquiry bodies' are in certain relations, which by their nature can be both as procedural and as non-procedural. The article emphasizes that in the literature there is no united opinion on the concept of interaction. So, the authors represent their own viewpoint.

In the article the institute of interaction of the investigator and the inquiry body undergoes to legal analyze, the draft innovations in this sphere are revealed. In particular, unlike the current Criminal Procedure Code, the article 6 of the draft defines the concept of investigation. Unlike the current Criminal Procedure Code, the draft reveals the concept of assignment.

The draft also expands the powers of the investigator in the relations with the inquiry bodies. For the investigator it defines such powers, which are intended for prosecutor in the current Criminal Procedure Code.

The article also represents the organizational forms of interaction, as well as its psychological aspects.

In sum, the article stresses the particularity of the organizational form of interaction, which, unlike the procedural, is always improving.

## УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫЕ И ОРГАНИЗАЦИОННО-ТАКТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ФОРМ ВЗАИМОДЕЙСТВИЯ СЛЕДОВАТЕЛЯ С СОТРУДНИКОМ ОРГАНА ДОЗНАНИЯ

### Ваге Енгибарян

*Доцент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ,  
доктор юридических наук, Исполнительный директор  
Союза Судей Республики Армения (e-mail: vahe777@yahoo.com)*

### Артур Чахоян

*Старший прокурор прокуратуры города Еревана,  
Доцент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ,  
кандидат юридических наук (e-mail: arturchakhoyan@ysu.am)*

Статья посвящена одной из важнейших задач уголовно-процессуального права и науки криминалистики – основам организации расследования уголовного дела, в частности, организации взаимодействия следователя и органа дознания.

В процессе расследования преступлений взаимодействие следователя и органов дознания представляет собой определенную структуру связей правоохранительной деятельности, которая находит свое проявление в согласованной деятельности взаимодействующих субъектов.

При расследовании уголовных дел следователь и сотрудники органа дознания входят в определенные отношения, которые по своей сути могут быть как процессуальными, так и непроцессуальными.

В статье подчеркивается, что в профессиональной литературе нет единого мнения о понятии взаимодействия, тем не менее, авторы представляют собственную точку зрения, определяя взаимодействие как совместную деятельность органов предварительного расследования и органов дознания, основанную на законе, ведомственных и межведомственных нормативных актах, согласованную местом, временем, задачами и целями и совместным использованием своих специальных сил, способов, приемов и методов, которая направлена на поиск источников, содержащих доказательственную информацию, с целью раскрытия преступлений и лиц, совершивших преступления.

Далее в статье сравнительному правовому анализу подвергается институт взаимодействия следователя и органа дознания, раскрываются новшества Проекта УПК в этой сфере. В частности, в отличие от действующего УПК, ст. 6-ая Проекта УПК содержит понятие дознания, которое представляет собой вспомогательную деятельность органа дознания в процессе предварительного следствия. В отличие от действующего УПК, Проект УПК раскрывает понятие поручения, которое представляет собой письменное указание прокурора следователю, начальнику следственного органа, указание начальника следственного органа следователю или указание следователя органу дознания, в пределах их полномочий, целью которого является выявление определенных

обстоятельств, совершение определенных действий, принятие определенных решений или же воздержание от совершения действий или принятия решений.

Проект УПК расширил также полномочия следователя в отношениях с органами дознания, и определил для него такие полномочия, которыми в действующем УПК уполномочен только прокурор. Например, в отличие от действующего УПК, в Проекте УПК следователь поручает органу дознания исполнение решений о задержании, взятии под стражу, так же получает поддержку от органа дознания в процессе исполнения доказательственных и иных производственных действий, поручает органу дознания исполнение секретных следственных действий и оперативно-розыскных мероприятий, требует от органа дознания результаты оперативно-розыскных мероприятий и секретных следственных действий.

В статье одновременно представлены организационно-тактические формы взаимодействия, так же психологические аспекты взаимоотношений, осуществляемых в рамках этого взаимодействия.

Подводя итоги, в статье подчеркивается особенность формы организации взаимодействия, которая в отличие от процессуального состоит в его непрерывном совершенствовании. Подчеркивается, что новые формы требуют проверки и дальнейшего регулирования в подзаконных актах. Тем не менее, каждый из них должен быть основан на двух критериях:

а) любая форма взаимодействия должна быть основана на последовательности и правильном разделении функциональных обязанностей разных органов,

б) форма и способы взаимодействия не могут противоречить закону.

**Բանալի բառեր** – փոխգործողություն, քրեական դատավարություն, քննիչ, հետաքննության մարմնի աշխատակից, տակտիկա, քրեական գործ, քննչական գործողություն, հանձնարարություն

**Ключевые слова** – взаимодействие, уголовный процесс, следователь, сотрудник органа дознания, криминалистическая тактика, уголовное дело, следственные действия, поручение

**Key words** – Interaction, criminal procedure, investigator, employee of inquiry body, tactics, criminal case, investigative action, assignment